2132.819565

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
« 14 » 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000086

Ձեռնարկողը՝ ***«Լանջաքար» ՍՊԸ***
Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, 4-րդ թաղ. 48 տ

Գործունեությունը՝ ***Լանջաքարի բազալտների հանքերևակման տեղամասում 2020-2021 թ.թ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000086

<<14>> 10 2020թ.

ՀՀ Կոտայքի մարզի Լանջաքարի բազալտների հանքերևակման տեղամասում 2020-2021 թ.թ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Լանջաքար» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2020-2021թթ. ընթացքում կատարել Կոտայքի մարզի Լանջաքարի բազալտների հանքերևակման տեղամասում ընդերքի երկրաբանահետախուզական աշխատանքներ: Երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «Ընդերք» ՍՊԸ-ի ուժերով, «ԼԱՆՋԱՔԱՐ» ՍՊԸ-ի ֆինանսական միջոցների հաշվին՝ պայմանագրային հիմունքներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի բազալտների պիտանելիությունը երեսապատման և շինարարական քարի արտադրության համար, բավարարելով 9479-2011 ԳՈՍՏ-ի և 100-95 ՀՍՏ-ի տեխնիկական պահանջներին:

Լանջաքարի բազալտի հանքերևակումը վարչական տեսակետից գտնվում է Հրազդանի տարածաշրջանում:

Համաձայն նախնական գնահատման հայտի հայցվող տարածքը գտնվում է Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սահմաններում: Հետախուզվող տարածքը գտնվում է Հրազդան քաղաքից մոտ 12.5կմ և Լեռնանիստ գյուղից մոտ 7.5կմ դեպի հարավ-արևելք:

Շրջանի կլիման չափավոր ցամաքային է: Ձմռանը ջերմաստիճանը հասնում է մինչև -30 իսկ ամռանը մինչև +25°C : Տարվա միջին ջերմաստիճանը -5°C: Տարեկան տեղումների միջին քանակը 626մմ: Երևակման տարածքի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները գտնվում են սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում:

Ուսումնասիրության տարածքում բացակայում են աղբյուրները և գետնաջրերը: Տարածաշրջանի ջրագրական գլխավոր միավորը Հրազդան գետն է իր Մարմարիկ, Ծաղկաձոր, Դալար և այլ վտակներով:

Նախնական հայտի համաձայն բուն երևակման տարածքի հողերը, մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված: Ուսումնասիրության տարածքի հողերը նպատակային, գործառնական նշանակությամբ արոտավայրեր են:

Ուսումնասիրության տարածքում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է միջինը 10-20սմ: Շրջանի տարածքին բնորոշ են բարձրադիր լեռները, ռիելեֆի հրաբխային և էրոզիոն ձևերը, սարավանդներն ու գետահովիտները: Բուն տարածքը ամբողջությամբ մերկացված տեղանք է :

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են պալեոզոյի, կավճի, միջին էոցենի, միոցենի և չորրորդական հասակի ապարները, որոնցից առավել տարածված են չորրորդականի լավային դաշտերը, որոնք զբաղեցնում են շրջանի տարածքի 90%:

Երևակման տեղամասն իր երկրաբանական կառուցվածքի բարդությամբ և մորֆոլոգիական բնութագրով դասվում է 1-ին խմբին:

Հանքերևակման տարածքը գտնվում է 2386-2410մ բացարձակ բարձրությունների վրա՝ զբաղեցնելով 3,3հա տարածք: Ուսումնասիրվող տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 համակարգով).

X1 = 4476995.7	Y1 = 8488589.1
X2 = 4476986.1	Y2 =8488740.6
X3 = 4476760.7	Y3 = 8488745.1
X4 = 4476770.5	Y4 = 8488602.4

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը սողանքավտանգ չէ: Մոտակա հայտնի սողանքային մարմինը գտնվում է տեղամասից 10 կմ հյուսիս:

Նախնական գնահատման հայտի համաձայն երևակման տարածքում գրունտային ջրերի հորիզոնները բացակայում են և դրանց հայտնաբերման դեպքում լրացում դրանց ուսումնասիրության համար կկազմվի ծրագիր, ինչը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից:

Ուսումնասիրության տարածքում բացակայում են աղբյուրները և գետնաջրերը դաշտային աշխատանքների ժամանակ(ինչը կտևի ընդամենը 2-3 ամիս) խմելու և կենցաղային ջրերը կբերվեն Լեռնանիստ գյուղից:

Հանքավայրի տարածաշրջանում տարածված են սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերը: Բուն երևակման տարածքի հողերը մեծ մասամբ քարքարոտ են, էրոզացված, դրանց մակերեսի քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը թույլ քարքարոտ, 17%՝ միջին քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Տվյալ տարածքին բնորոշ է մարգագետնատափաստանային բուսականություն՝ Festuca, Phleum, Carex ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ:

Կոտայքի մարզի կենդանական աշխարհը համեմատաբար ավելի աղքատիկ է: Շրջանին հարող տարածքների կենդանական աշխարհին բնորոշ են գայլը, աղվեսը, նապաստակը, արջը: Թռչուններից առավել տարածված են անտառային կաչաղակը, լեռնային խատուտիկը, կիսասպիտակավիզ, ճանճորսը: Երկրաբանական հետախուզման համաձայն հայտի տարածքում բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության

հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Հորատանցքերը նախատեսվում է հորատել օգտակար հանածոյի մարմնի «վերին հոսքի բազալտների» լրիվ հզորության որոշման և նմուշարկման համար: Աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատմբ:

Հորատումը կկատարվի 93մմ տրամագծերով կարծր համաձուլվածքային թագիկներով, ինքնագնաց հաստոցով:

Նախատեսվում է հորատել թվով 4 հորատանցք 10-15մ խորությամբ, ընդամենը 55 գծ.մ ծավալով: Բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային նմուշարկման:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2020թվականի երրորդ եռամսյակից մինչև 2021 թվականի չորրորդ եռամսյակը:

Նոր տարածքներ չխախտելու նպատակով, փորձնական հանույթը կիրականացվի անցյալում շրջակա բնակավայրերի բնակչության կողմից իրականացված արդյունահանմամբ արդեն իսկ խախտված տարածքում և կզբաղեցնի 50մ^2 մակերես:

Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 50.0մ^3 ծավալով կոպտամշակված տարբեր 1-ին, 2-րդ և 3-րդ կարգերի բլոկներ:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում 10x5x5մ չափերով՝ 250մ^3 ծավալով, որից 100մ^3 դելյուվիալ առաջացումներ ու փուշտա և 150մ^3 չհողմահարված թարմ ապարներ: Հողաբուսական շերտը կազմում է 32 մ^3:

Նախատեսվում է բազալտներն ուսումնասիրել որպես երեսապատման և շինարարական քարի արդյունահանման հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահունուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացվելու է անընդհատ տիրույթներով՝ 11 նմուշ,
- մենաքարի նմուշ բացահանքից՝ 1 հատ (20x20x20սմ),
- քիմիական կազմը որոշելու նպատակով՝ 2 նմուշ,
- քարաբանական կազմի ուսումնասիրության նպատակով՝ 2 նմուշ,
- համախառը նմուշ - 1 նմուշ 200կգ զանգվածով:

Վերցված բոլոր նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների՝ «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Իսկ փորձնական բացահանքից և հորահարթակներից հանված հողաբուսական շերտը կուտակվելու և պահեստավորվելու է առանձնացված տարածքում, որը նմուշարկման աշխատանքներից անմիջապես հետո փխրեցվելու և օգտագործվելու է խախտված հողերի հարթեցման համար:

Փորձնական բացահանքի անցումից առաջացած 100մ^3 դելյուվիալ առաջացումները և փուշտայի շերտի ապարները կօգտագործվեն փորձնական բացահանքի և անցած տարիներին մոտակա բնակավայրերի բնակիչների կողմից խախտված տարածքների ու դեպի երևակում տանող դաշտամիջյան ճանապարհի բարեկարգման համար, ինչը

միաժամանակ թույլ կտա խուսափել ընդերքօգտագործման թափոնների առաջացումից և դրանց տեղադրման համար լրացուցիչ տարածքների զբաղեցումից: Հայտի համաձայն տարածքում աշխատող տեխնիկան լիցքավորվելու է մոտակա լիցքավորման կայանում, բացառելով տարածքում նավթամթերքների պահեստավորումը, իսկ դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպվելու է տեխ. սպասարկման կայաններում:

Ճանապարհների կառուցում կամ նորոգում չի նախատեսվում, քանի որ տեղամասն ունի համեմատաբար հարթ ռելիեֆ և տեղամասով անցնում է սար տանող գործող ճանապարհ:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կկազմի 3,96 մ3/տարի, միջին օրեկան 0.066մ3:

Հայտի համաձայն հանված հողերի պահպանման հատուկ պայմաններ չեն նախատեսվում, քանի որ յուրաքանչյուր հորատանցքի հորատումը կտևի 2 օրից ոչ ավել, որից հետո հարթակը կվերականգնվի: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Վերականգնման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կազմում է 160մ^2: Փորձնական բացահանքի համար նախատեսված 50մ^2 տարածքը ռեկուլտիվացիայի չի ենթարկվելու, այն միայն կհարթեցվի մեխանիկական եղանակով:

Վերականգնման ամբողջ ծավալը կկազմի 160մ^2 x 0.2մ = 32մ^3

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո կատարվելու է խախտված տարածքների լեռնատեխնիկական ռեկուլտիվացիա՝ 32 մ^3 ծավալով և լանդշաֆտի վերականգնում: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսվելու է 80 հազ.դրամ իսկ փորձնական բացահանքի անցումից առաջացած 100մ^3 դելյուվիալ առաջացումները և փուշտայի շերտի ապարները կօգտագործվեն փորձնական բացահանքի և անցած տարիներին մոտակա բնակավայրերի բնակիչների կողմից սեփական կարիքների համար կատարված հանույթի հետևանքով խախտված տարածքների և դեպի երևակում տանող դաշտամիջյան ճանապարհի բարեկարգման համար կծախսվի 50հազ. դրամ: Ընդամենը խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և հարթեցման վրա կծախսվի 130հազ. դրամ, որը ընկերության կողմից հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին՝ ՀՀ կառավարության 23,08,2012թ. 1079-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն:

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքներին կկազմի.

0.16 հա x 2500 դրամ = 40.0 հազ. դրամ:

Համաձայն նախնական հայտի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտի ամբողջականության վրա:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ նախ 7կմ շառավղով դրանք բացակայում են և երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումների և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի նորմերը: Վտանգավոր թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) կուտակումներ չեն առաջանալու: Բուսական և

կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ հորատման հարթակների կառուցման և փորձնական հանույթի կատարման աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների ու թռչունների բնադրավայրերից հեռու:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի թույլատրելի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

- Տարածքում աշխատող տեխնիկան լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում՝ բացառելով տարածքում նավթամթերքների պահեստավորում:
- Դիզելային շարժիչների սպասարկումը կազմակերպել տեխ. սպասարկման կայաններում:
- Կենցաղային աղբի տեղափոխումը մոտակա աղբահավաք կետերում:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:
- Փոշենստեցման նպատակով ջրցանում տարվա չոր և շոգ եղանակներին: Ջուրը նախատեսվում է փոխադրել Լեռնանիստ գյուղի ջրամատակարարման ցանցերից՝ համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն:
- Կեղտաջրերի հավաքումը հորատիպ զուգարանում, ինչը դատարկում է հատուկ ծառայության ուժերով:
- Կենդանական և Բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ՝ հիմք ընդունելով << կառավարության 31.07.2014թ. N781 որոշման դրույթները:

Պատճառաբանական եզրահանգումներ. նախատեսվող գործունեության նպատակն է բազալտներն ուսումնասիրել որպես երեսապատման և շինարարական քարի արդյունահանման հումք, որոնք իրենց որակական հատկանիշներով պետք է ապահովեն երեսապատման բլոկներ լեռնային ապարներից, երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննության ընթացքում նախագիծը լրամշակվել է շրջակա միջավայրի նախարարության դիտողությունների ու առաջարկությունների հիման վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնանիստի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն է տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ և արդյունքները ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն << կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված հավելվածի ժամկետներում և ձևաչափով:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված

բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լանջաքար» ՍՊԸ-ի Լանջաքարի բազալտների հանքերևակման տեղամասում 2020-2021 թթ. ընթացքում երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Փորձագետ՝ Վ. Ռաիսյան